Հայկական պատմամշակութային ժառանգությունը ցուցադրող այգու կառուցման ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը[1]

Ծրագրի նպատակն է ստեղծել յուրահատուկ թեմատիկ այգի, որտեղ կցուցադրվեն հայկական պատմամշակութային, ճարտարապետական ժառանգության նմուշների կրկնօրինակները: Այս այգում այցելուն կարող է գտնել հին և նոր քաղաքային փողոցների, շինությունների, ճարտարապետական կոթողների, վանական համալիրների, տաճարների, բերդաամրոցների, տարբեր տեսարժան վայրերի մանրակերտ ցուցանմուշներ, ինչպես նաև դրվագներ քաղաքային և գյուղական առօրյայից: Կնախատեսվեն տեղեկատվական վահանակներ, որոնք հնարավորություն կտան այցելուին ծանոթանալ այս կամ այն նմուշի պատմությանը, տեղեկանալ հետաքրքրաշարժ փաստերի: Այստեղ կգործի նաև «Հայաստանի համը» հայկական խոհանոցով ռեստորանը՝ տարբեր տարածաշրջաններին բնորոշ հայկական ավանդական կերակրատեսակներով: Կարճ ժամանակով Երևան ժամանող հյուրերը այցելելով այգի՝ կկարողանան ծանոթանալ Հայաստանի, նրա պատմամշակութային հարուստ ժառանգության հետ:

[1] *Նախագծում առկա որոշ նկարներ տարբեր քաղաքներում գործող նմանատիպ կենտրոնների օրինակներ են:*



Ցուցանմուշները՝ ներառյալ շենքերը, շինությունները, ավտոտրանսպորտային միջոցները, ենթակառուցվածքները և այլն, կմոդելավորվեն 1:30 չափով:
Նմանատիպ մանրակերտ ցուցանմուշներով այգիներ կան Բելգիայում, Ֆրանսիայում, Հոլլանդիայում, Իտալիայում, Ավստրայում, Իսպանիայում, Իզրաիլում, Ուկրաինայում և այլն երկրներում:

Նախատեսվող այգում կգործեն զբոսավարներով տուրեր: Այգում կտեղադրվեն նստարաններ, կկառուցվի նաև հուշանվերների խանութ, սննդի կետեր, կայանատեղ:

Տեխնիկական ցուցանիշներ	Համալիր կենտրոնի ընդհանուր մակերեսը կկազմի մինչև 1 հա:
Ծրագրի ժամկետներ	Ծրագրի իրականացման ժամկետը՝ շուրջ 2 տարի:
Ծրագրի արժեքը	Շուրջ 4 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում:
Ներկա իրավիճակ	Առկա է հայեցակարգային նախագիծ: